ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 4, 1964 Общественные науки

Մ. Դ. Հակոբյան

ՄԻ ԱՆԾԱՆՈԹ ԷՋ ՀԱՅ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻ ԸՆԴՀԱՏԱԿՅԱ ՊԱՅՔԱՐԻՑ

(Հայկական լեգիոնի առաջին (808-րդ) գումարտակը)

Մեր կուսակցության վերջին տասնամյակի լենինյան հետևողական քաղաքականության շնորհիվ վերականգնվում են ժողովրդի պատմության հերոսական, բայց հանցագործ կերպով մթագնված շատ էջեր, հայտնի են դառնում շարաչար զրպարտված բազմաթիվ խիզախներ։ Այդ արժանավոր զավակների թվում քիչ չեն Հայրենական պատերազմի տարիներին անձնվիրաբար մաքառած հայ ռազմիկները։ Այդ էջերից շատերն առնչվում են մահու ու կենաց դյուցազնամարտին հայ ժողովրդի մասնակցության պատմությանը։

Սույն հոդվածը մի փորձ է վերականգնելու և ամբողջացնելու, այսպես կոչված, հայկական լեգիոնի միայն առաջին (գերմանական համարակալումով 808-րդ) գումարտակի հերոսական պատմության էջերը, լույս սփռելու ծանրագույն պայմաններում այդ գումարտակի ընդհատակը գլխավորած հայրենասերների ճակատագրի վրա։

Նախ նկատենք, որ մի քանի հրատարակություններում սրանից առաջ խոսվել է առհասարակ կամ հայկական լեգիոնի ընդհատակայինների մասին, կամ նկարագրվել են նրանց գործունեության որոշ դեպքեր։ «Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծերի» նախորդ հրատարակության մեջ լեգիոնի «ընդհատակյա ռևոլյուցիոն կոմիտեի» հակաֆաշիստական պայքարին է նվիրված մի ընդարձակ ծանոթագրություն։ Նույնանուն գրքի վերջին հրատարակության մեջ խնդրո առարկայի առթիվ ասված է. «Հայկական լեգիոն» բռված հայ ռազմագերիները, բացառությամբ առանձին դավաճանների, հավատարիմ մնացին սովետական հայրենիքին»։

Հարցին անդրադարձել են նաև «Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության» (երրորդ պրակ) հեղինակները։ Գրքի ութերորդ գլխում մատնանշված է լեգիոն ստեղծելու հանգամանքները և նրա ընդհատակյա կազմակերպության նպատակը՝ «Ռազմագերիների մեջ վառ պահել պայքարի ոգին..., կազմակերպել ռազմագերիների և լեգիոնականների փախուստը պարտիզանների մոտ, զենքը ձեռքին շարունակել պայքարը ֆաշիստական զավթիչների դեմ»[2]։

«Սովետական պատմական հանրագիտարանը» ևս անդրադարձել է այս հարցին։ Այստեղ «АППО» հոդվածի հեղինակ Մ. Լ. Եպիսկոպոսովը[3] տվել է լեգիոնի ընդհատակի հակիրճ ակնարկը։ Առաջին գումարտակի մասին նա գրել է. «Փոխադրվել է Մայկոպի շրջանը։ 1942-ի հոկտ. գեստապոն իմացավ այդ գումարտակում նախապատրաստվող ապստամբության մասին։ Ապստամբության ղեկավար Ե. Պ. Խաչատրյանը մի խումբ ընդհատակայինների հետ գնդակահարվեց, մնացածները բանտարկվեցին և տուգանային ճամբարներ ուղարկվեցին»[4]։

---

1 «Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր», Երևան, 1958, էջ 570—571 և 1963, էջ 551։

2 Մ. Պ. Ա ղ ա յ ա ն, Ե. Մ. Խ ա լ ե յ ա ն, Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, երրորդ պրակ, 1960, էջ 267—268։

3 Մ. Լ. Եպիսկոպոսովն (Մոսկվա) է առաջին անգամ միութենական մամուլում հանգեցնելով հայ ռազմագերիների ընդհատակյա պայքարին նվիրված ակնարկով (տե՛ս «Огонек», 1957, № 19)։

4 Советская историческая энциклопедия, 1961, т. 1, стр. 614.

Դրանցով ավարտվում են մեզ հայտնի այն հրատարակությունները, որոնցում ուղղակի կամ անուղղակի խոսք կա հայկական լեգիոնի առաջին գումարտակի մասին[5]։ Այդ աղբյուրները ոչ միայն զատ-զատ, այլև միասին վերցրած քիչ թե շատ պատկերացում չեն տալիս լեգիոնի առաջին գումարտակի և նրա ընդհատակի դժվարին ու հերոսական գործունեության մասին, սովետի տակ են թողնում հայրենասիրական պայքարի արյունոտ էջերը, էջեր, որ անհատի պաշտամունքի տարիներին մթագնվել, զրպարտվել են, իսկ մարտիրոսացած հերոսները մոռացվել են, հալածանքի ենթարկվել։

Չորս տարիների որոնումներով մեզ հաջողվել է մի հավաքել հարուստ նյութ տվող հուշեր և վավերագրեր, որոնք հնարավորություն են ընձեռում շարադրելու հայկական լեգիոնի միայն առաջին գումարտակի հայրենասերների գործունեությունը։ Մեր նյութերն են՝ Լևոն Հովհաննիսյանի 1942 թ. մարտից 1943 թ. կեսերն ընդգրկող օրագիրը և հուշերը՝ սրանց կցված «Հավելվածով» (ընդամենը 8+58+8=74 էջ), Խաչիկ Անդրեասյանի (Գրիշա Ստեփանյան) հուշերը և մի շարք վավերագրերի ու վկայությունների պատճենները (ընդամենը 105+16=121 էջ), այդ երկուսի միատեղ կազմած տեղեկանքը (5 էջ), Իշխան Մկրտչյանի (Հասրաթյան) և Ալբերտ Նալբանդյանի համատեղ հուշատետրը (27 էջ), Վազգեն Խոջոյանի «Մեմուարները» և ծավալուն նամակը (16+20=36 էջ), Ղազար Ասատրյանի հուշերը (40 էջ), Միքայել Սաղյանի հիշողությունների տետրը (19 էջ), Խաչիկ Կանդայանի, Աբրամ Նալբանդյանի, Խորեն Զամարյանի, Պարգև Մելքոնյանի գրառումները (ընդամենը 20 էջ), ինչպես նաև հարցի հետ առնչվող Ելենա Դմիտրենա Բավիոնիկի և Ստեփան Յակովլևիչ Տեր-Գրիգորյանի հուշերի պատճենները (3+3=6 էջ)։ Նախկին լեգիոնականներից մենք Կիրովաբադում գրի ենք առել Սուրեն Մարկոսյանի հիշողությունները (26 էջ) և զրուցել մի քանի այլ ընկերների հետ։ Այս ամենից բացի մեր ձեռքի տակ են զոհված լեգիոնականներին նվիրված մի շարք այլ նյութեր, ինչպես նաև բազմաթիվ նամակներ, որոնցից հատկապես հարուստ և արժեքավոր նյութեր են պարունակում լեհ ընդհատակայիններ Ռոմուալդ Մազուրկևիչի և Ստանիսլավ Կոտտերի ծավալուն նամակները (ընդամենը 24 էջ)[6]։

Որոշ հարցերում այդ նյութերն այս ու այն իրադարձության կամ ընդհատակայինի վերաբերյալ տարբեր տվյալներ են հաղորդվում։ Այդ և մեկ-երկու հարցում թույլ տրված անճշտությունները (միշտ մասնակի խնդիրների շուրջը) հիմնականում այն բանի հետևանք են, որ նյութերի զգալի մասը ստեղծվել է իրար հետ բոլորովին կապ չունեցող անձնավորությունների կողմից, դեպքերից շուրջ երկու տասնյակ տարի անց։ Հանդիպող տարաձայնությունները նաև այն խորը կոնսպիրացիայի արդյունքն են, որի անխախտելի կանոններին համապատասխանաբար ընդհատակայիններ առանձին խմբեր գործում էին առանց իրար հետ անմիջական կապեր ունենալու։ Դա նաև բխում է նրանից, որ դաժան ճակատագրով զոհ են գնացել ընդհատակի ակտիվ գործիչներից շատերը։ Այդուհանդերձ, հիմք ընդունելով հիշյալ նյութերը, ամեն կերպ ձգտել ենք ավելի մոտենալ ճշմարտությանը, պարզել իրականությունը։ Ըստ որում նախապատվությունը բնականաբար տրվել է այն նյութերին, որոնք ստեղծվել են ավելի վաղ՝ 1942—1943-ին և որոնց հեղինակներն անմիջականորեն մասնակցել են տվյալ կոնկրետ դեպքերին։

Հայ ռազմագերիները համակենտրոնացման հիտլերյան ճամբարներում ենթարկվել են նույն վայրագ բարբարոսություններին, ինչ առհասարակ սովետական մյուս ազգություններին պատկանող գերիները։ Այլ նպատակներից զատ ֆաշիստները ձգտում էին այդպիսով հայ ռազմագերիներին դարձնել հլու-հնազանդ գործիք, ստիպել նրանց համագործակցել իրենց հետ։ Նրանք ոտնահարելով ռազմագերիներին իրենց հայրենիքի դեմ ուղղված որևէ գործողության մեջ ներգրավելն արգելող (և ամեն մի) միջազգային օրենք, 1942 թ. գարնանից սկսեցին հայ ռազմագերիներից ազգային լեգիոն ստեղծել։ Այդ ռազմագերիների մեծամասնությունը ֆաշիստների ձեռքն էր ընկել զլխավո-

5 Մենք նկատի չունենք պարբերական մամուլում հրատարակված նյութերը։

6 Օգտվելով առիթից, շնորհակալություն ենք հայտնում իրենց հուշերը մեզ տրամադրած ընկերներին և նրանց, որոնք արխիվային նյութերից օգտվելու հնարավորություն ընձեռեցին։

բանակ պատերազմի առաջին ամիսներին, վիրավոր վիճակում, շրջապատման մեջ՝ մինչև վերջին հնարավորությունը մարտնչելուց հետո։ Դրանց մեջ քիչ թիվ չէին կազմում կազրային սպաները, պարտադիր ծառայությունն անցած կարմիրբանակայինները, կոմունիստներն ու կոմերիտականները։ Կոմունիստական գաղափարախոսությամբ դաստիարակված, հանգամանքների դժբախտ բերումով թշնամու ձեռքն ընկած այդ մարդկանց ճնշող մեծամասնության համար դավաճանության գաղափարը խորթ էր, մեր երկիրը ներխուժած թշնամին՝ ատելի։

Սկզբնական շրջանում հիտլերականները փորձեցին հայ ռազմագերիներին ազգային լեգիոն հավաքագրել «կամավոր» կերպով։ Դրանում նրանց օգնում էին հայ վտարանդի թափթփուկները, որոնց գործելու համար հիտլերյան հրամանատարությունը լայն հնարավորություններ էր ստեղծել, շռայլ խոստումներ տվել։ Բայց հայ վտարանդիները դրեթե ամենուր հանդիպում էին սպանիչ արհամարհանքի, բացահայտ դիմադրության։ «Հայրենիքին չենք դավաճանի, ավելի լավ է մեռնել»,—հայտարարում էին հայրենասերներից շատերը և հիտլերականների վտարանդի գործակալներին համարում հայ ժողովրդի երդվյալ թշնամիներ։ Այդպիսիներին ավելի ծանր ճակատագիր էր սպասում։ Նրանց «մշակում», տանջում, սովամահ էին անում։ Այդ ճանապարհով հիտլերականները հասան այն բանին, որ հանդես եկան առաջին «կամավորները»։ Բայց չափազանց փոքր էր դրանց թիվը։ Միակ ելքը մնաց հայ ռազմագերիներին մահվան սպառնալիքով, աշխատանքային գումարտակ ստեղծելու պատրվակով լեգիոն քշելը, ստոր խաբեության դիմելը։ Այդ մեթոդներով, այդ ճանապարհով էր, որ հիտլերականներին հաջողվեց լեգիոնում «հավաքագրել» հայ ռազմագերիներին։

Հայ ռազմագերիների թվում կային մարդիկ, որ հայկական լեգիոն գնացին կանխամտածված, հայրենասիրական նպատակներով, քաղաքացու և կոմունիստի իրենց պարտքն այնտեղ կատարելու որոշումով։ Լեգիոն ընկնելը նրանց համար նպատակ չէր, այլ միջոց՝ շարունակելու պայքարը։ Նպատակը՝ լեգիոնը քայքայելն էր, ֆաշիստների նենգ պլանները տապալելը։ Եվ թերևս հիմքից զուրկ չէ ոմանց այն ենթադրությունը, թե այդ քայլին դիմածների մեջ կային այնպիսիները, որոնք թշնամու թիկունքն էին ուղարկված (կամ թողնված) հենց ռազմագերիների մեջ աշխատանք ծավալելու համար։ Համենայն դեպս հայտնի է հիտլերյան ստավկայի 1941 թ. սեպտեմբերի 8-ի նախազգուշացումն այն մասին, որ սովետական ռազմագերիները համապատասխան ցուցումներ են ստացել, թե գերության մեջ ինչպես դրսևորել իրենց։ Այսպես թե այնպես ռազմագերիների բացարձակ մեծամասնությունը, գերության դժնդակ պայմաններում գտնվելով հանդերձ, չէր կորցրել և չէր կարող կորցնել հավատը սովետական կարգերի նկատմամբ։ Թշնամու ձեռքն ընկած բազմաթիվ հայ դինվորականներ իրենց կազմակերպչական ունակությունները, ռազմական դիտելիքները, մարտական փորձն ու մարդկանց հետ աշխատելու ձիրքերն ի սպաս դրեցին դժվարագույն պայմաններում ընդհատակյա պայքար մղելու նպատակին՝ անդրանիկ քայլերն անելով այդ ուղղությամբ։

Բնորոշ է Իսահակ Անդրեասյանի վկայությունը և նրա օրինակը։ Սովետական ազնիվ քաղաքացիները,—շեշտում է նա,—բոլոր պայմաններում շարունակում էին պայքարը, ելք էին որոնում, ինքնուրույնաբար կշռադատում իրադրությունը և ձգտում որևէ կերպ օգտակար լինել մարտնչող հայրենիքին։

«Անձամբ ես,—գրում է նա,—ներքուստ միշտ հարցնում էի, ինչով եմ օգնում ես այսօր հայրենիքիս և մտածում էի, թե ինչ առաջադրանք կտար ինձ կուսակցությունը, եթե ուղարկեր այս պայմաններում աշխատելու։ Եվ այս հարցի պատասխանով ինքս ղեկավարվում էի բոլոր դեպքերում»[7]։ Այդպես, հայրենասերներից յուրաքանչյուրը, կոմունիստական գաղափարախոսությամբ տոգորված ամեն ոք, թեկուզ գերության մեջ գտնվելով, շարունակում էր իրեն համարել հայրենիքի, կուսակցության զինվոր։

1942-ի մարտից հիտլերականները հայ ռազմագերիներին սկսեցին հավաքել լեհական Վեսոլա ավանում, նախապես նրանց առանձնացնելով մյուս ազգությունների գերիներից։ Դեռ մինչ այստեղ ընկնելը նրանց առանձին խմբերում գործում էին իրար հետ միավորված, մինչև անգամ հայրենասիրական գործունեություն ծավալող խմբավորումներ, որոնք հետևողական կազմավորվում, ամրանում, դառնում էին որոշակի նպատակներ հետապնդող բջիջներ, ընդհատակյա կազմակերպություններ։

Այդպիսի խմբավորումներ էին առաջացել Լևոն Հովհաննիսյանի և Ասահակ Անդրեասյանի (Գրիշա Ստեփանյանի), Ենոք Խաչատրյանի և Ժորա (Գեորգի) Գրիգորյանի, Էդիկ Խոնդկարյանի, Բագրատ Ասկանյանի և այլոց շուրջը։ Սկզբնապես դրանց նպատակն էր փախչել ֆաշիստական գերությունից։ Բայց, երբ սովետական մարդկանցից ազգային լեգիոն ստեղծելը փաստ դարձավ, նրանց գործունեությունը ենթարկվեց լեգիոնում մնալու և նրանում հակաֆաշիստական պայքար ծավալելու անհրաժեշտությանը։ «Փախչելու գաղափարը...,—վկայում է Լ. Հովհաննիսյանը,—որքան էլ հարազատ էր մեզ, այստեղ [լեգիոնում] չէր համապատասխանում մեր նպատակներին... Դա սոսկ փախուստ էր, թշնամու թիկունքում աշխատելու սեփական անկարողության ընդունում... Մենք համոզված էինք, որ կուսակցության անդամի մեր պարտքն է հենց կազմակերպել [գերիներին] և խանգարել գերմանացիներին»[8]։ Ավելին, կան վկայություններ այն մասին, որ ռազմագերիների մի մասի մեջ իշխում էր այն կարծիքը, թե «լեգիոնում կան մարդիկ, որոնք լիազորված և ուղարկված են ՍՍՌՄ-ից և նրանք նախապատրաստում են այն, ինչ պետք է, այսինքն ապստամբություն»[9]։

Շուտով գումարտակը փոխադրվեց Եգլինո (Իտալիայի մոտ), ապա Պուլավի քաղաքը, որը և դարձավ հայկական լեգիոնի վարժակայանը։

Ընդհատակյա գործունեությունը, թե՛ համակենտրոնացման ճամբարներում և թե՛ լեգիոնում ծավալվում էր մի կողմից ռազմագերիների մեջ հանդիպող անկայուն տարրերի, հաճախ նաև դավաճանների, մյուս կողմից ֆաշիստական ձեռնարկումների դեմ ուղղված պայքարի պայմաններում։ Այդ գործունեությունը Պուլավիում ընթանում էր երեք գլխավոր ուղղությամբ՝ ա) աշխատանք լեգիոնի ներսում, բ) համագործակցություն լեհ ընդհատակայինների հետ, գ) դիվերսիոն-քայքայիչ ձեռնարկումներ։

Բացատրական-ագիտացիոն աշխատանքի հիմնական նպատակն էր «մարդկանց մեջ հավատ ներշնչել իրենց ճակատագրի, իրենց ապագայի նկատմամբ», յուրաքանչյուրի մեջ սմրապնդել այն գաղափարը, որ նա կարող է «իր գիտակցված հակահիտլերյան գործունեությամբ բաժին ունենալ ատելի

7 Ի. Անդրեասյանի հուշերը, էջ 39։

8 Լ. Հովհաննիսյան օրագիրը, էջ 7։

9 Լ. Հովհաննիսյանի հուշերը, էջ 33։

ֆաշիզմի ջախջախման գործում, կատարել իր պարտքը հայրենիքի առջև»[10]։ Ընդհատակայինները բացատրում էին ռազմագերիներին, թե ո՛րն է «ազատ Հայաստան» լոզունգի բուն նպատակը, ինչո՛ւ ֆաշիզմի պարտությունն անխուսափելի է, ո՛րն է զավթիչների ժամանակավոր հաջողությունների պատճառը, ի՛նչ է բերում ժողովուրդներին ռասիզմը, ո՛րն է ամեն մի ազնիվ մարդու պարտականությունը, ի՛նչ է հարկավոր անել հայրենիքին օգնելու, դավաճան չդառնալու համար։ Բացատրական այդ աշխատանքին համընթաց ընդհատակայինները հայտնաբերում և իրենց շուրջն էին համախմբում հայրենասիրաբար տրամադրված նոր մարդիկ։ Երբ մեկ-երկու ամիս անց գերմանացիները սկսեցին Պուլավիում հավաքած ռազմագերիներին վաշտերի բաժանել, ապա գործող հայրենասերների թիվն արդեն այնքան մեծ էր, որ հնարավոր եղավ գրեթե բոլոր ստորաբաժանումները ներառնող ընդհատակյա ճյուղավորված ցանց ստեղծել։

Այսպես, գումարտակի կազմավորման շրջանում առաջին վաշտի ընդհատակայինների թիվը հասնում էր 10-ի։ Նրանց գործունեությունը ղեկավարում էր Ա. Տավարածյանը։ Երկրորդ վաշտում Ն. Դավթյանի և Վ. Պողոսյանի ցուցումներով գործում էին 8 հայրենասերներ։ Ս. Մարկոսյանի, Վ. Մելքոնյանի, Խ. Զաքարյանի և նրանց հետ համագործակցող մոտ 10 հայրենասերների ակտիվ մասնակցությամբ էին ընթանում երրորդ վաշտում ծավալվող աշխատանքները։ Գումարտակի 4-րդ վաշտում 11 ընդհատակայիններից բաղկացած բջիջը գործում էր Ա. Սաֆարյանի ղեկավարությամբ։ Մի այլ բջիջ ղեկավարում էր Բագրատ Ոսկանյանը, իսկ շտաբային վաշտում աշխատանք էին կատարում Ժ. Գրիգորյանը, Ք. Նալչյանը, Ի. Մկրտչյանը (Հասրաթյան)։ Ընդհատակյա աշխատանք էր ծավալվում նաև գումարտակի սանիտարական մասում, որտեղ գտնվում էին Հ. Խաչատրյանը, Դ. Գասպարյանը, Յու. Կոնիկյանը (ազգությամբ հրեա)։

Իր հետագա գործունեությունը հաջողությամբ ծավալելու և առաջադրված խնդիրները հեշտությամբ կատարելու համար ընդհատակն անհրաժեշտ համարեց, որ հայրենասերներից ոմանք դասակներում ու վաշտերում հրամանատարական պոստեր գրավեն, թափանցեն գումարտակի շտաբի կազմը[11]։ Դրա համաձայն վաշտերի և դասակների հրամանատարների տեղակալների պարտականություններ էին ստանձնել ընդհատակի հետ կապված զգալի թվով մարդիկ։ Գումարտակում ծավալվող ամբողջ ընդհատակյա աշխատանքը գլխավորող կորիզի մեջ էին մտնում ավագ լեյտենանտներ Արմո Ավետիսյանը, Սերգո Բարսեղյանը, Ժորա Գրիգորյանը, կապիտան Ենոք Խաչատրյանը, քաղղեկի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը, քաղղեկ Գրիշա Ստեփանյանը (Իսահակ Անդրեասյան)[12]։

---

10 Նույն տեղում, էջ 20—21։

11 Ֆաշիստները որպես կանոն լեգիոնում հրամանատարներ էին նշանակում գերմանացիներին, իսկ հայ ռազմագերիներից՝ միայն տեղակալներ։

12 Մեզ համար վերջնականապես պարզ չէ, թե ով էր ընդհատակյա կազմակերպության ղեկավարը։ Այս հարցում մեր ձեռքի տակ եղած նյութերում տարաձայնություններ կան։ Դա թերևս տարբեր խմբերի առկայության, աշխատանքը խիստ կոնսպիրացիոն պայմաններում ծավալելու հետևանքն է։

Շուրջ երեքամսյա ուսուցումից հետո, 1942-ի հուլիսին, հիտլերականները վերջնականապես կազմավորեցին հայկական լեգիոնի առաջին գումարտակը։ Լեռնա-հրաձգային տիպի այդ գումարտակը բաղկացած էր 5 վաշտից, որից 3-ը հրաձգային, մեկը՝ գնդացրային, մյուսը՝ շտաբային։ Յուրաքանչյուր վաշտ իր կազմում ուներ երեք դասակ, իսկ գնդացրայինը՝ նաև ականանետային դասակ։ Շտաբային վաշտի մեջ էին մտնում կապավորների, սակրավորների և հետևակային հրանոթաձիգների վաշտերը։ Առանձին դասակ էին կազմում մատակարարողները։ Բոլոր ստորաբաժանումների մեջ կային նաև բավական թվով գերմանացիներ։ Գերմանացիներ էին նաև գումարտակի և բոլոր վաշտերի ու դասակների հրամանատարները։ Գումարտակի հրամանատար էր նշանակված ավստրիացի Հոֆմանը՝ մայորի կոչումով։ Այդ նույն ժամանակ էլ գումարտակի անձնակազմի մի մասին մարտական զենք տրվեց, բայց առանց... զինամթերքի։

Գումարտակի կազմավորումով առաջ եկան նոր խնդիրներ, սկսվեց հայրենասերների գործունեության նոր էտապը։ Հուլիսի կեսերին կայացավ ընդհատակի գաղտնի խորհրդակցություն, որին մասնակցում էին 12 հայրենասերներ, որոնց թվում Լ. Հովհաննիսյանը, Ի. Անդրեասյանը, Ն. Դավթյանը, Վ. Պողոսյանը, Ե. Խաչատրյանը, Ա. Տավարաժյանը, առաջին և երկրորդ վաշտերի հրամանատարների տեղակալները։ Հետո խորհրդակցության մասին հայտնվեց Վ. Խոջոյանին, Վ. Մելքոնյանին, Ս. Մարկոսյանին, Մ. Աթանեսյանին և այլոց։ Խորհրդակցությունը, ըստ Լ. Հովհաննիսյանի հիշողությունների, մատնանշեց.

ա) դժվարին խնդիր է ծառացած առաջին գումարտակի ընդհատակի առջև՝ հակաֆաշիստական գործունեությամբ և գերմանացիների ստոր պլանները ձախողելով, օրինակ տալ մյուս գումարտակներին, որոնք, դարձյալ հայ ռազմագերիներից, ստեղծվում են Պուլավիում.

բ) զինվելը և լեհ հայրենասերների հետ կապեր հաստատելը հող կնախապատրաստեն զինված ապստամբության, գերմանական տեղական կայազորը ոչնչացնելու, պարտիզանական խմբեր ստեղծելու համար.

գ) հարկավոր է ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրել գումարտակի անձնակազմը, երևան հանել այն մարդկանց, ովքեր կարող են խոչընդոտել ընդհատակի ձեռնարկումների և պլանների իրագործմանը, մասնավորապես պարզել երրորդ վաշտի հրամանատարի հայազգի տեղակալի վարքագիծը։

Պուլավի ընկնելու առաջին օրերից ընդհատակայինների գլխավոր նպատակներից մեկը լեհ հայրենասերների հետ կապեր հաստատելն էր և նրանց հետ համագործակցելը։ Այս ուղղությամբ կատարված բոլոր քայլերը չեն, որ այսօր հայտնի են։ Բայց այն, ինչ վկայում են մի կողմից լեհ, մյուս կողմից հայ նախկին ընդհատակայինները, հիմք են տալիս արձանագրելու, որ 1942-ի գարնան սկզբից նրանց միջև սերտ կապեր էին հաստատվել։ Լեհական ընդհատակի նախկին գործիչ Ե. Դ. Բավիոնիկը վկայում է, որ իր հետ կապ է հաստատել նախ մի հայ բժիշկ (ազգանունը չի հիշում), ապա նրա ընկերը՝ Գրիգորյան ազգանունով։ Նրանք ասացին, որ «իրենք ցանկանում են առաջին իսկ հարմար առիթով հայերին սովետական տերիտորիա փոխադրել... Լեհական ընդհատակի աշխատողները ևս սկսեցին հետաքրքրվել ճամբարում գտնվող

սովետական քաղաքացիներով... Այդպես ծնվեց համագործակցության գաղափարը»[13]։

Բավիոնիկն առաջինն էր, որ իրար կապեց երկու ընդհատակները։ Այնուհետև կապ հաստատվեց Ռ. Անդրեասյանի և լեհ ընդհատակային Ստանիսլավ Մազուրկևիչի ընտանիքի միջև։ Այդ օրերից քսան տարի անց Ստանիսլավի որդին՝ Ռոմուալդը վերհիշում է. «Հայ ռազմագերիների հետ առաջին անգամ ես հանդիպեցի 1942 թ. գարնանը... Այդ ժամանակից հայերը սկսեցին հաճախակի այցելել մեր տունը և շուտով մենք բարեկամացանք։ Նրանք հորս և ավագ եղբորս հետ խոսում էին ընդհատակյա աշխատանքի մասին։ Մենք բոլորս՝ հայրս, ես և երկու եղբայրներս մտնում էինք ընդհատակյա կազմակերպության մեջ»[14]։ Լեհ ընդհատակայիններից մեկ ուրիշը՝ Ստանիսլավ Կոտտերը վկայում է, որ Պուլավիի հայ ռազմագերիների հետ ինքը կապ է հաստատել լեհական ընդհատակի առաջադրանքով։ Կրկնելով Բավիոնիկին, Կոտտերը, նրանից անկախ, պատմում է Պուլավիից փախած և լեհ պարտիզաններին միացած առաջին հայ ռազմագերիների՝ Նիկոլայ Բաղմանյանի և Կոստանդին Մարդանյանի մասին[15]։

Այս արժեքավոր վկայությունները, որոնց հեղինակների ակտիվ ընդհատակյա գործունեության մասին պատմում են նաև լեհական տպագիր հրատարակությունները[16], լիովին համընկնում են հայկական լեգիոնի նախկին ընդհատակայինների հուշերին։ Շատ են դրանք և ընդարձակ։ Ուստի միայն համառոտակի անդրադառնանք։

Դեռևս 1943 թ. հունվարի 18-ին, մի հարցաքննության ժամանակ, առաջին գումարտակի ընդհատակայիններից Ա. Նալբանդյանը վկայել է. «Դեռ Պուլավի քաղաքում Գրիգոր Ստեփանյանը և Արտուշ Սաֆարյանը կապված էին լեհ երկաթուղային բանվորների կուսակցական կազմակերպության հետ»[17]։ Վ. Խոջոյանի հուշերից երևում է, որ հայ և լեհ ընդհատակայինների սկզբնական կապերը խիստ ընդլայնվել են, որ գումարտակի դաղտնի կազմակերպության գործիչներից Լ. Հովհաննիսյանին և Ն. Խաչատրյանին ճանաչում էին լեհական ընդհատակի անդամներից շատերը, որոնց, մանավանդ Ստ. Մազուրկևիչի ընտանիքի հետ նրանք սերտ շփման մեջ էին գտնվում[18]։ Ինքը Լևոն Հովհաննիսյանն այդ առթիվ մատնանշում է. «Գ. Ստեփանյանի [Ի. Անդրեաս-

---

13 Ն. Բավիոնիկի հուշերը, էջ 1։ Լեհական ընդհատակի այս ակտիվ գործիչի, իսկ այնուհետև նաև ուրիշների հետ հետագայում կապ են հաստատել նաև Ստ. Յաղջյանը և Ստ. Տերտերիգորյանը (տե՛ս հուշեր, էջ 1—2)։ Այս կապի և հայ ռազմագերիների ընդհատակյա կազմակերպությանն է նվիրված մեր հոդվածը «Տեղեկագրի» 1962 թ. № 8-ում։

14 Ռ. Մազուրկևիչի 1963 թ. մարտի 18-ի նամակը, էջ 1—2։

15 Ստ. Կոտտերի 1962 թ. դեկտեմբերի 3-ի և 1963 թ. հունվարի 11-ի նամակները։ Այս մասին գրում է նաև լեհ ընդհատակային Ն. Լուշչևսկան՝ իր 1964 թ. փետրվարի 8-ի նամակում։ Նրանց պատմածները հաստատվում են Բերդ գյուղի միջնակարգ դպրոցի դիրեկտոր Կ. Մարդանյանի հուշերով։ Ավելացնենք և այն, որ լեգիոնից փախածների թիվը նշվածներով չի սահմանափակվում։ Բայց լեհական ընդհատակը դեռևս թույլ լինելով, հնարավորություն չուներ աջակցելու փախչել ցանկացող բոլոր հայ ռազմագերիներին և խորհուրդ էր տալիս չդիմել փախուստի, կազմակերպված ձևով հանդես գալ (Ն. Բավիոնիկի հուշերը, էջ 3)։

16 Նկատի ունենք St. Rodak („Rola")-ի „Maszeruja chłopskie Bataliony..." գիրքը (1960 թ., էջեր 99, 261, 271, 322, 127 և այլն)։

17 Տե՛ս գրառումների մեր № 1 տետրը, էջ 3։

18 Վ. Խոջոյանի մեմուարները, էջ 6 և 1964 թ. փետրվարի 26-ի նամակը, էջ 7—8։

յան) միջոցով կապ էր հաստատվել տեղական լեհական ընդհատակի հետ՝ ք. Պուլավի, փ. Սկվիշինսկայա 36 հասցեով, այս տունը միջանկյալ էր։ Լեհ ընդհատակայիններն ուրախությամբ ընդունեցին համագործակցելու մեր առաջարկը... Միասնական ուժերով ընդհանուր թշնամու դեմ պայքարելը միավորում էր մեզ մի ամբողջության մեջ»[19]։ Իր հերթին Ի. Անդրեասյանը վերհիշում է իր կապերը Ս. Մազուրկևիչի հետ և ապա ավելացնում՝ «Արմո Ավետիսյանը կապ էր ստեղծել լեհ ընդհատակային մի ճարտարապետի հետ»[20]։ 1942-ի օգոստոսին կայացած ընդհատակյա նիստին, ինչպես վկայում են Ի. Մկրտչյանը և Ա. Նալբանդյանը, Ենոք Խաչատրյանը հայտնել է, որ «սերտ կապեր են ստեղծված... լեհական ընդհատակում աշխատող կոմունիստների հետ, հանձինս Անտոնի և ուրիշների, որոնք կազմակերպել են Պուլավիի առաջին պարտիզանական ջոկատը»[21]։ Հայ և լեհ ընդհատակայինների միջև ստեղծված կապերի մասին վկայություններ կան նաև Ստ. Տեր-Գրիգորյանի, Ղ. Ասատրյանի, Մ. Սաղյանի, Հ. Խաչատրյանի հուշերում, ինչպես և Ս. Մարկոսյանի պատմածի սղագրությունում ու Վ. Խոջոյանի ընդարձակ նամակում։

Երկուստեք ստեղծված այդ կապերի շնորհիվ ձեռնարկվեցին կոնկրետ միջոցառումներ, մշակվեցին համատեղ գործելու որոշ պլաններ։ Ռազմագերիները լեհերից պարբերաբար հաղորդումներ ստացան ռազմաճակատում տիրող իրական դրության մասին։ Լեհ ընդհատակային Ստ. Կոտտերը գաղտնի պահում էր ռադիո-ընդունիչ[22]։ Ստ. Մազուրկևիչի մոտ կար գրամեքենա, որ ձեռք էր բերվել (գողացվել էր) գերմանական պարետատնից մի խումբ երիտասարդ ընդհատակայինների (որոնց թվում էին իր որդին՝ Ռոմուալդը և Հ. Ջալկան) ջանքերով։ Լեհ ընդհատակայինների միջոցով ստացված թերթիկները գաղտնի կերպով մուտք էին գործում լեգիոնի վարժականը և տարածվում։ Այս մասին մասնավորապես հիշատակում է նախկին ընդհատակայիններից Վ. Խոջոյանը, որի առջև խնդիր էր դրված ինֆորմացիոն հաղորդագրությունները վարժական բերել[24]։

Մեր ձեռքի տակ եղած նյութերը բավականաչափ տեղեկություններ չեն հաղորդում հայ և լեհ ընդհատակայինների հանդիպումների մանրամասնությունների մասին։ Հայտնի է, սակայն, որ գումարտակի ընդհատակայինների գլխավոր նպատակներից մեկն էր միասնաբար գործել լեհերի հետ, դինված ելույթ նախապատրաստել և պարտիզանական համատեղ պայքար ծավալել ֆաշիստների դեմ։ Այդ պլանները, դժբախտաբար, անհրաժեշտ պաշտպանություն չեն գտել Պուլավիի լեհական ընդհատակի ղեկավարության շրջանում, որն այդ ժամանակ միատարր չէր, բաղկացած էր հակադիր թևերից[25]։

---

19 Լ. Հովհաննիսյանի հուշերը, էջ 37։

20 Ի. Անդրեասյանի հուշերը, էջ 64։

21 Ի. Մկրտչյանի և Ա. Նալբանդյանի համատեղ հուշերը, էջ 10։

22 Տե՛ս Ստ. Կոտտերի հուշերը և փաստաթղթերի լուսանկարչական պատճենները։

23 Տե՛ս Ռ. Մազուրկևիչի հուշերը և նամակները։

24 Վ. Խոջոյանի մեմուարները, էջ 5—6։ 1964 թ. փետրվարի 26-ի նամակում (էջ 9) կրկին անդրադառնալով այդ հարցին, Խոջոյանը նշում է, որ Մազուրկևիչի բնտանիքի միջոցով ստացվել է նաև «մի ռուսական «Պրավդա»։

25 Ընդհատակյա «բյուրոյի առաջադրանքով,— գրում է Ի. Ի. Անդրեասյանը,— ես հատուկ հանդիպում ունեցա Մազուրկևիչի հետ։ Հայտնեցի, որ մենք պատրաստ ենք ապստամբելու Պուլավիում, տշնչացնելու այդ քաղաքի գերմանական կայազորը, դրավելու բաղարը և պարտի-

Բայց դա չի խանգարել հայ հայրենասերների և լեհական ընդհատակի ստորին օղակների համագործակցությանը՝ որոշ շրջանակներում։ Այս իմաստով հետաքրքրական են լեհ ընդհատակայիններին զենք ու զինամթերք տրամադրելու մասին վկայությունները։ Վ. Խոջոյանը հիշատակում է լեգիոնի վարժակայանից, աղբատար երկու լեհերի միջոցով, զենք դուրս տանելու փաստը[26]։ Ի. Մկրտչյանը և Ա. Նալբանդյանը պատմում են հետևյալը. լեհերը զենքի խիստ կարիք ունեին։ Ենոք Խաչատրյանը և Ժորա Գրիգորյանը, ընդհատակյա խորհրդակցության ժամանակ, 1942 թ. օգոստոսին, դրեցին նրանց զենք տրամադրելու հարցը։ Պատրվակ դարձնելով լեհական պարտիզանների ձևական, նախօրոք կազմված պլանով կատարված հարձակումը վարժակայանի վրա մեր ընդհատակայինները կարողացան հրացաններ տալ լեհ հայրենասերներին[27]։

Ենոք Խաչատրյանի ցուցումով լեհ հայրենասերներին զենք ու փամփուշտ հանձնելու մասին են հիշատակում նաև Ս. Մարկոսյանը և Վ. Խոջոյանը։ Նրանց վկայությամբ հայ ընդհատակայիններին հաջողվել է թափանցել զինամթերքի գերմանական պահեստ և այնտեղից դուրս բերված 2 ավտոմատն ու 2 արկղ փամփուշտը հասցնել լեհերին։ Մի այլ դեպքում, ինչպես վկայվում է, զենքեր ու զինամթերքներ են թաքցվել նախապես պայմանավորված տեղում, որ լեհերը վերցնեն[28]։ Վարժակայանի զենքի արհեստանոցից, ինչպես ժամանակին ցուցմունք է տվել Ա. Նալբանդյանը, լեհերին է հանձնվել նաև 2 ատրճանակ և մի քանի հազար փամփուշտ[29]։ Նախկին ընդհատակայինների մոտ այս կարգի ուրիշ հիշատակություններ ևս կան։

Լեհ հայրենասերները հաստատում են գումարտակի ընդհատակայիններից զենք ստանալու փաստը։ Ի. Անդրեասյանի մասին խոսելիս, Ռ. Մազուրկևիչը 1963 թ. մարտի 18-ի նամակում գրում է. «Նա մի անգամ ինձ ասաց, որ հայերը չեն կարողանում կազարմաներից անմիջապես մեզ զենք հասցնել։ Բայց պարապմունքների ժամանակ, կայարանամերձ եղևնուտում դիտավորյալ կերպով կթողնեն փամփուշտներ, նռնակներ, ուժանակ և այլն։ Իմ ընդհատա-

---

դանական պատերազմ սկսելուց։ Հաջորդ հանդիպման ժամանակ Մազուրկևիչն ինձ բացատրեց, որ... լեհ ընկերները դեռ վաղ են համարում ապստամբությանը իրենց մասնակցելը» (հուշեր, էջ 67 և 70)։ Նույնն են վկայում նաև Լ. Հովհաննիսյանը (հուշեր, էջ 46—47), և Վ. Խոջոյանը (1964 թ. փետրվարի 26-ի նամակը, էջ 9)։ Լեհական ընդհատակի անմիտարը լինելու և նրա ներսում գոյություն ունեցող տարբեր հոսանքների մասին տե՛ս «Люди, факты, размышления» գրքի (М., 1963) էջ 23, 25, 61, 143 և հետո։

26 Վ. Խոջոյանի մեմուարները, էջ 6։

27 Ի. Մկրտչյանի և Ա. Նալբանդյանի հուշերը, էջ 10—12։ Ըստ նրանց այդպես հաջողվել է լեհերին հանձնել «30 հրացան, 5 ատրճանակ, մեծ քանակությամբ փամփուշտ»։ Նույն աղբյուրից դատելով, դրանից հետո հիտլերականներն անվստահությամբ են վերաբերվել Ժ. Գրիգորյանին և հանելով շտաբի կազմից, ի վերջո դարձրել են շարքային լեգիոնական (12—13)։ Այս փաստերը հաստատող ուրիշ վկայություն մենք չունենք։

28 Ս. Մարկոսյանի պատմածի աղագրությունը, էջ 2—3։ Այստեղ հիշատակվում է նաև այն մասին, որ հետագայում ֆաշիստները ընդհատակայիններին մեղադրել են լեհերին զենք տալու համար (14—15)։

29 Տե՛ս գրառումների մեր № 1 տետրը, էջ 3։

կային ընկերները և ես պարապմունքներից հետո խնամքով հավաքում էինք այդ բոլորը և հանձնում ընդհատակյա բջիջներին»[30]։

Հայկական լեգիոնի առաջին գումարտակն ընկած հայ ռազմագերիները Լեհաստանում մնացին մոտավորապես 5—6 ամիս՝ մարտից մինչև օգոստոսի 20-ը։ Բավականաչափ հիմնավորված նյութերի բացակայությունը, ինչպես և հոդվածի ծավալը հնարավորություն չեն տալիս մեզ խոսելու ընդհատակյա պայքարին վերաբերող այն բազմաթիվ փաստերի մասին, որոնք հիշատակվում են այս կամ այն ընդհատակյինի կողմից, բայց որոնք չեն հանդիպում մյուսների հիշողություններում[31]։

Օգոստոսի կեսերին գերմանացիները լրիվ զինեցին լեգիոնի առաջին գումարտակը, որի անձնակազմն այդ ժամանակ հասնում էր 800 մարդու (ակտիվ մարտիկների թիվը կազմում էր 550)։ Գումարտակն ուներ մինչև 10 հաստոցային և ձեռքի 27 գնդացիրներ, 55 մմ տրամաչափի 6 և 82 մմ տրամաչափի 3 ականանետներ[32]։

Գումարտակը զինելն ընդհատակի համար վճռական քայլերի դիմելու ահազանգ եղավ։ Այդ ուղղությամբ ձեռնարկված առաջին լուրջ քայլն ապրստամբական կոմիտե ստեղծելն էր՝ օգոստոսի կեսերին։ Կոմիտեի ընդհանուր ղեկավար նշանակվեց կապիտան Ենոք Խաչատրյանը, շտաբի պետ՝ ավագ լեյտենանտ Ժորա Գրիգորյանը, կոմիսար՝ քաղղեկ Բսահակ Անդրեասյանը։ Նախատեսվում էր հետագայում կոմիտեի կազմը լրացնել[33]։ Ապստամբական կոմիտեն այդ պահից դարձավ գումարտակի ընդհատակյա աշխատանքը կազմակերպող ու ղեկավարող կենտրոն։ Նրա առաջնակարգ նպատակն էր ստեղծված ելույթ նախապատրաստել։ Մի քանի օրից, սակայն, հայտնի դարձավ, որ հիտլերյան հրամանատարությունը մտադիր է գումարտակը շուտափույթ ռազմաճակատ նետել։

Օգոստոսի 20-ին գումարտակը իր լրիվ կազմով, երկու էշելոնով դուրս եկավ Պուլավիից[34]։ Սեպտեմբերի 29-ին այն հասավ Հյուսիսային Կովկաս, Նեթեգորսկ։ Ամեն կերպ խոչընդոտելով լեգիոնականների ու սովետական քաղաքացիների շփումները և շրջանցելով արդեն հզոր պարտիզանական պայքարով բռնկված մարզերը, հիտլերականները գումարտակը ռազմաճակատ փոխադրեցին հետևյալ երթուղիով. Պուլավի—Բրեստ-լիտովսկ—Մինսկ—Գոմել—Բախմաչ—Խարկով—Լոզովայա—Տագանրոգ, ապա հիտիոտն, ծովափով՝ Ռոստով, իսկ այնուհետև՝ Պոդկուշչևսկ—Կուշչևսկ—Նովո-Միխայլովսկ—Պավլովսկայա—Տիխարեցկ—Արխանգելսկայա—Կրասնոտիկին—Օտրադնո-Կուբանսկոյե—Արմավիր—Կոզմինսկ—Վոզնեսենսկ—Լաբինսկ—Մայկոպ—Նեթեգորսկ։

30 Տե՛ս Ռ. Մազուրկևիչի 1963 թ. մարտի 18-ի նամակը, էջ 2։

31 Ս. Մարկոսյանն, օրինակ, պատմում է (սղագրություն, էջ 14), որ գեստապոն ընդհատակյաներին մեղադրել է նաև Պուլավիում գերմանական 2 թե 3 սպա ոչնչացնելու համար։

32 Առավել հզոր զենքերով զինված էին գումարտակի կազմի մեջ մտնող գերմանացիները, որոնց թիվը հասնում էր մի քանի տասնյակի։

33 Տե՛ս Վ. Խոջոյանի մեմուարները, էջ 7—8, նաև Ռ. Անդրեասյանի հուշերը, էջ 68։

34 Գումարտակի ընդհատակյաները Պուլավիից դուրս գալուց առաջ կարողացան վարժանքյանում թողնել բժիշկ Հ. Խաչատրյանին, Նաուստովին և այլոց, որպեսզի շարունակեն աշխատանքը նոր կազմավորվող գումարտակներում, ինչպես և նոր մարդիկ կապեցին Ստ. Մազուրկևիչի հետ (տե՛ս Լ. Հովհաննիսյանի, Ռ. Անդրեասյանի, Հ. Խաչատրյանի հուշերը և Վ. Խոջոյանի 1964 թ. փետրվարի 26-ի նամակը, համապատասխանաբար էջ 47—48, 75—76, 6 և 12)։

Երթուղին զումարտակն անցավ հիմնականում ճեպընթաց արագությամբ։ Գնացքը մինչև Տագանրոգ հասնելը կանգ չէր առնում նույնիսկ հանրուցային կայարաններում։ Թերևս բացառություն է կազմում Ժլոբին կայարանը, որտեղ գնացքը կանգ առավ մի ամբողջ, իսկ մի այլ վկայությամբ՝ երեք օր։ Օգտագործելով առիթը, ինչպես հաստատում են ընդհատակյաներից ոմանք, ապստամբական կոմիտեն կարողացավ կապվել տեղական ընդհատակի, ապա նրա միջոցով՝ սովետական պարտիզանների հետ[35]։ Նշենք նաև այն, որ սովետական տերիտորիայում գործող ընդհատակյա կազմակերպությունների և պարտիզանական խմբերի հետ կապվելու համար կոմիտեի գործադրած հետագա ջանքերը հաջողությամբ չեն պսակվել[36]։

Ապստամբական կոմիտեն իր առջև խնդիր էր դրել առաջավոր դիծ հասնելուն պես, զումարտակի ամբողջ կազմով, անցնել մերոնց կողմը։ Այդ նպատակի իրագործմանն ի սպաս դրվեցին բոլոր ջանքերը։ Ճանապարհին տեղի ունեցան կոմիտեի մի քանի նիստեր, որոնց ընթացքում նախապատրաստվում էր դիտված ելույթը, քննարկվում էին այս կամ այն լեգիոնականին ապստամբության մասնակից դարձնելու հարցերը։ Կոմիտեն ստեղծեց հարվածող խմբեր, ընդհատակյաներին ու հայրենասերներին բաժանեց դասակների, որոնց հրամանատարներ նշանակեց առավել վստահելի ու փորձառու մարդկանց։ Մասնավորապես որոշվեց ապստամբելու պահից զումարտակի երրորդ վաշտի հրամանատարությունը դնել կապիտան Համո Ղազարյանի, չորրորդ վաշտինը՝ ավագ լեյտենանտ Սերգո Բարսեղյանի վրա, իսկ շտաբի կազմը լրացնել Արմենակ Փափազյանով և Արամ Նալբանդյանով[37]։ Պրովոկացիաներից խուսափելու համար ապստամբական կոմիտեն նպատակահարմար չգտավ մարդկանց առանձին-առանձին կամ նրանց փոքր խմբերով փախուստները։ Ավելին, այդ պատասխանատու օրերին փախչելը, բնականաբար, դիտվում էր իբրև հրկիզոտություն, առաջիկա վճռական ելույթից խուսափելու, սեփական կաշին փրկելու միջոց[38]։

Ապստամբական կոմիտեի նիստերից հատկապես կարևոր էր սեպտեմբերի վերջերին Լարինսկում կայացածը, որին մասնակցում էին մոտ 25 մարդ։ Ընդհատակյաները հանդամանորեն քննարկեցին առաջիկա ապստամբու-

35 Տե՛ս Ս. Մարկոսյանի հուշերի ողբերգությունը, էջ 4—8, Ի. Մկրտչյանի և Ա. Նալբանդյանի հուշերը, էջ 15, Լ. Հովհաննիսյանի հուշերը, էջ 49—51 և 53, Վ. Խոջոյանի մեմուարները, էջ 9 և 1964 թ. փետրվարի 26-ի նամակը, էջ 12։ Ըստ վերջինիս վկայության զումարտակի ընդհատակյաները Ժլոբինում ցանկանում էին միանալ պարտիզաններին, բայց սրանք հավանություն չեն տվել, ասելով, «Կխանգարեք մեր գործելուն, քանի որ ձեր շնորհիվ գերմանացիներն իրենց ամբողջ ուշադրությունը կդարձնեն դեպի մեզ, լավը այն է, որ ձեր մտադրությունները ճակատում իրականացնեք»։ Այս մասին հիշատակվում է նաև Լ. Հովհաննիսյանի հուշերի հավելվածում (էջ 5), իսկ բուն հուշագրողի վկայությամբ պարտիզաններին որոշ բանակցությամբ զենք է հանձնվել նաև Դոնբասում ու Տագանրոգում (էջ 53)։

36 Այս մասին վկայում է Մ. Սաղյանը (հուշեր, էջ 5—6)։

37 Ի. Անդրեասյանի հուշերը, էջ 78, Վ. Խոջոյանի մեմուարները, էջ 9—12։

38 Լ. Հովհաննիսյանի հուշերը, էջ 49, Ի Անդրեասյանի հուշերը, էջ 76—78։ Հակառակ դրան զումարտակի կազմից տեղի ունեցան մի շարք փախուստներ, որոնց առթիվ ձերբակալություններ կատարվեցին։ Մ. Սաղյանի տվյալներով Ռոստովի մարզի Զալիր գյուղում փախան 10, իսկ Ռոստովում 20 հոգի (հուշեր, էջ 5)։

թյան նախապատրաստության ընթացքը[39]։ Այդ ժամանակաշրջանում ապըստամբական կոմիտեն ընդհատակայինների ուշադրությունը բևեռել էր երկու կարևոր խնդրի վրա. ա) իրագործել գինված ելույթը, բ) տեղական ընդհատակի միջոցով մեր զորամասերին զգուշացնել սպասվող գինված ելույթի մասին։

Առաջին խնդրի իրագործումն ընթանում էր Ենոք Խաչատրյանի և Ժորա Գրիգորյանի անմիջական ղեկավարությամբ։ Նրանք վերջնականապես ճշտում էին ապստամբության պլանը, ուսումնասիրում տեղանքը, կոնկրետ քայլերի դիմում։ Զինված ելույթի ազդանշանը պետք է տրվեր լուսաբացից առաջ, գրնպացրային վաշտից[40]։ Ակտիվ ընդհատակայիններից այդտեղ էին գտնվում Արմո Ավետիսյանը, Բագրատ Ոսկանյանը, Սերգո Բարսեղյանը, Քերոբ Նալչյանը և ուրիշներ։ Նախ որոշված էր անմիջապես շարքից հանել գումարտակի գերմանական անձնակազմը, ինչպես և հնարավոր մատնիչներին, իսկ գումարտակի հրամանատար մայոր Հոֆմանին ձերբակալել և կենդանի վիճակում մերոնց հասցնել։ Յուրաքանչյուր գերմանացու ոչնչացման խնդիրը միաժամանակ դրված էր երեք մարդու վրա։ Այդ ժամանակ ընդհատակում «ընդգրկված էին համարյա բոլոր գերիները, բացառությամբ մի քանիսի»[41]։

Տեղացի հայրենասերների, ինչպես և պարտիզանների հետ կապ հաստատելու համար Ի. Անդրեասյանն ու Լ. Հովհաննիսյանն իրենց հերթին, Արմո Ավետիսյանն իր հերթին հանդիպել են սովետական առանձին քաղաքացիների[42], մասնավորապես տեղական սովետի դեպուտատ Սոնիայի (Սոֆիա Չիբչիբեկյանի), իսկ նրա միջոցով հետո նաև Մարֆուշա Բոչարովայի հետ[43]։ Դրա շնորհիվ էր, որ մերոնց կողմը կապավորներ ուղարկելու փորձեր արվեցին։ Մեր հայտնի վկայություններից դատելով ռազմաճակատի գիծն անցնել հա-

---

39 Ի. Անդրեասյանի հուշերը, էջ 81—82, Լ. Հովհաննիսյանի հուշերը, էջ 53։ Լստ Ղ. Ասատրյանի վկայության հիշյալ խորհրդակցությունը կայացել է Վոզնեսենսկում (հուշեր, էջ 32—33)։ Նրա հետ համերաշխ է Վ. Խոջոյանը, որը միաժամանակ նկատում է, թե ընդհատակը նպատակ ուներ Վոզնեսենսկում ապստամբել և կոնկրետ հանձնարարականներ էր տվել, բայց հետո հրաժարվել է այդ նպատակից՝ տեղավայրի անհարմարությունից ելնելով (մեմուարներ, էջ 10—11 և 1964 թ. փետրվարի 26-ի նամակը, էջ 13—14)։

40 Լ. Հովհաննիսյանի վկայությամբ ազդանշանը պետք է տրվեր կարմիր բանակի զորամասերի կողմից (հուշեր, էջ 54)։

41 Տե՛ս Ղ. Ասատրյանի, Ի. Անդրեասյանի, Ի. Մկրտչյանի և Ա. Նալբանդյանի, Լ. Հովհաննիսյանի, Վ. Խոջոյանի, Պ. Մելքոնյանի և Մ. Սաղյանի հուշերը (համապատասխանաբար էջ 34, 84, 20, 54, 10, 2, 5 և այլն)։

42 Բանաստեղծ Գեորգ Էմին «Սովետսկի Կուրանտ» թերթի (1959 թ. № 11362) միջոցով տեղեկություն է հայտնել, որ որոնվեն հայ ընդհատակայիններին (Ի. Անդրեասյանին) աջակցած մարդիկ։ Մեր ձեռքի տակ են Ս. Ս. Չիբչիբեկյանի, Ա. Պ. Կովալեայի, Մ. Ի. Երեմինայի, Հ. Կ. Կավանեսյանի, Կ. Կ. Ռահանյանի վկայությունները։ Վերջինս հաստատում է, որ Արմոյի (Արմո Ավետիսյան) հանձնարարությամբ ռազմաճակատն անցկացնելու համար տղեկցել է երկու (Արտեմ, Միհրան) ընդհատակայինի։ Ինչպես պարզվում է Ռահանյանի վկայությունից այդ փաստը հայտնի է դարձել գերմանացիներին, որոնք նրան ձերբակալել են, հալածանքի ենթարկել։ Այն մասին, որ գերմանացիներին հայտնի էր հայ ընդհատակայինների մտադրությունը երևում է նաև Լ. Հովհաննիսյանի հուշերից (էջ 55)։

43 Մ. Բոչարովան մատնությամբ բռնել է ֆաշիստների ձեռքը, տանջամահ արվել։ Մ. Երեմինայի վկայությամբ բարբարոսները նրա մեջքին հնգաթև աստղեր են փորել, կտրել կուրծքը, հանել աչքերը, բայց խիզախ հայրենասերը մնացել է անընկճելի։

հողվել է մի դեպքում գումարտակի ընդհատակյիններից երկուսին, իսկ երկրորդ դեպքում՝ «մի տեղացի հայի»[44]։

Սակայն գումարտակն ամբողջ կազմով, մեր բանակի կողմն անցկացնելու պլանները հաջողությամբ չպսակվեցին։ Ահա թե ինչ տեղի ունեցավ.

1942 թ. սեպտեմբերի 28-ին գումարտակը հասավ Նեթեզորսկ, իսկ մի շաբաթ անց՝ հոկտեմբերի 5-ին՝ ռազմաճակատ։ (Դա այն ժամանակ էր, երբ ֆաշիստական զավթիչները կովկասյան նախալեռներում ծար հարվածներ ստանալով, պաշտպանության էին անցել)։ Բայց չորրորդ օրը՝ հոկտեմբերի 9-ին[45] ֆաշիստները, խիստ հսկողության ներքո, գումարտակը վաշտ առ վաշտ ետ քաշեցին առաջավոր գծից, լիովին զինաթափ արեցին և ակտիվ ընդհատակյիններին, նախապես կազմված ցուցակով ձերբակալեցին՝ առաջին խմբին անմիջապես, իսկ երկրորդին՝ ավելի ուշ։ Մեր տվյալներով ընդամենը ձերբակալվել են 30—31 ընդհատակյիններ, իսկ ըստ ստորև վկայակոչվող աղբյուրի՝ ընդհատակի 33 ղեկավարներ։

Ո՞րն էր գումարտակն արագորեն զինաթափելու պատճառը, ի՞նչն էր հարկադրել գերմանացիներին շուտափույթ հրաժարվել իրենց ստոր պլաններից։

Արմատական այս հարցերին գումարտակի ընդհատակյիններն ուղղակի պատասխան չեն տալիս։ Նրանց հայտնի չեն տեղի ունեցածի բուն շարժառիթները։ Բայց ահա մեր ձեռքի տակ է մի պատկառելի փաստաթուղթ, որ օգնում է լույս սփռելու չափազանց կարևոր այդ հարցերի վրա։

Անդրկովկասյան ռազմաճակատի մեր զորքերի սևծովյան խմբի շտաբի հետախուզական բաժինը 1943 թ. սկզբներին պատրաստել, տպագրել և ծառայողական նպատակներով սովետական զորամասերն է ուղարկել մի բրոշյուր։ Այն կրում է հետևյալ խորագիրը՝ «СПРАВОЧНИК по национальным частям и легионам, действующим перед фронтом ЧГВ ЗКФ в составе 17-ой немецкой армии (по состоянию на 1. 1. 43 г.)»[47] և նույն շտաբի հետախուզական բաժնի պետ, գնդապետ Երեմինի և ինֆորմացիոն

---

44 Այս փաստի մասին վկայում են նաև Ի. Մկրտչյանը և Ա. Նալբանդյանը, այն տարբերությամբ, սակայն, որ ըստ նրանց՝ ուղեկցող ծերունուն (Հարությունն) հաջողվել է կապվել մերոնց հետ և մի գեներալից հանձնարարական նամակ բերել Ենոք Խաչատրյանին, որն այդ առթիվ հատուկ նիստ է գումարել (հուշեր, էջ 23—26)։ Այս մասին ուրիշ վկայություն մեր ձեռքի տակ չկա։

45 Նյութերի մի մասում հոկտեմբերի 9-ի փոխարեն հիշատակվում է հոկտեմբերի 18 կամ 19։ Հակառակ դրան մենք հիմք ենք ընդունում դեպքերի թարմ հետքերով կազմված, անպայմանորեն ճշված և տպագրված աղբյուրը (տե՛ս շարունակությունը)։ Հուշագրողներից շատերի պնդմամբ գումարտակը ռազմաճակատի առաջավոր գծին չի հասել։

46 Տե՛ս Ա. Նալբանդյանի ցուցմունքը 1943 թ. նոյեմբերին՝ գրառումների մեր Ա 1 տետրը, էջ 9։

47 Այս փաստաթղթի (այսուհետև՝ «Տեղեկատու») գոյությունը մեզ հայտնի է դարձել «Ավանգարդում» տպագրված (1962 թ. հունիսի 21) մեր վավերագրական ակնարկից («Առաջինների ճակատագիրը») հետո։ Շարունակելով որոնումները, մենք այնուհետև «Вопросы истории КПСС» ամսագրի միջոցով դիմեցինք պատմաբան Մ. Ա. Սամոյլոյի (Մոսկվա) գրությանը, ապա և, նրա խորհրդով Կրասնոդարի պարտիական արխիվի վարիչ Վ. Ֆ. Լատիշինին։ Վերջինիս միջոցով հայտնաբերվեց հիշյալ փաստաթուղթը, որին, ինչպես և արխիվային մի շարք նյութերի ծանոթացանք տեղում՝ Կրասնոդարում։ Այժմ մեր ձեռքի տակ է «Տեղեկա-

բաժնի պետ, 2-րդ կարգի զինվորական ինժեներ Զումակի ստորագրությունները։

Այդ վավերագրի մի առանձին՝ «Հայկական լեգիոնի 808-րդ գումարտակը» վերնագիրը կրող հատվածում շարադրվում է առաջին գումարտակը ստեղծվելու հանգամանքները, տրվում է նրա կազմը, շեշտվում ռազմաճակատ ուղարկվելու երթուղին և զինաթափ արվելու փաստը։ Այնտեղ այնուհետև ասված է.

«Գումարտակը զինաթափ է արվել այն բանի հետևանքով, որ գերմանական հրամանատարությունը բացահայտել է կարմիր բանակի նախկին ավագ լեյտենանտ Գրիգորյանի ղեկավարությամբ գումարտակում գործող ընդհատակյա կազմակերպությունը։ Խումբն իր առջև խնդիր էր դրել ոչնչացնել գերմանական հրամանատարությանը և անցնելով ռազմաճակատի գիծ, միանալ կարմիր բանակին։ Գումարտակը զինաթափ արվելուց մի քանի օր առաջ (ուրեմն հենց առաջավոր գծին հասնելու օրը.—Մ. Հ.) ռազմաճակատի գիծն անցնելու համար] Գրիգորյանն ուղարկել էր երեք մարտիկների, որոնց խնդիրն էր կապ հաստատել կարմիր բանակի գործող զորամասերի հետ և նրանց տեղյակ պահել գումարտակի մտադրությունների մասին։ Հավանաբար այդ մարտիկները բռնվել են, որի հետևանքով էլ գերմանական հրամանատարությանը հայտնի է դարձել ընդհատակյա խմբի գոյությունը»[48]։

Հայկական լեգիոնի հենց առաջին գումարտակի գաղտնի կազմակերպության գործունեությունը վավերացնող և ընդհատակայինների ճակատագրի մասին ուղղակիորեն պատմող այս չափազանց կարևոր վկայությունը լիովին դուգադիպում է նախկին ընդհատակայինների հաղորդած տեղեկություններին՝ այդ մասին։

Գումարտակի զինաթափված անձնակազմը վերածվեց ճանապարհային-շինարարական գումարտակի և այդ «պահից գերմանական հրամանատարության վերաբերմունքը գումարտակի անձնակազմի նկատմամբ կտրուկ կերպով փոխվեց դեպի վատը։ Մարդկանց ծեծում էին խարազաններով, գնդակահարում ամեն մի մանրուքի համար և տանջում քաղցով»[49]։ Ֆաշիստների վերջին ձիգերն էին այդ. աշխատանքային գումարտակը ևս բայքայվեց։ Ահա այնուհետև ինչ է վկայում «Տեղեկատուն». «...Դասալքությունը սպառնալից չափերի հասավ, ամեն օր մեր կողմն էին անցնում լեգիոնականների խմբեր։ (Ընդամենը անցել են 73 լեգիոնականներ։ Դրանից հետո հիտլերյան հրամանատարությունը գումարտակը թիկունք քաշեց։ Գումարտակի կազմից մինչև 400 մարդ բանտարկված են համակենտրոնացման ճամբարներում»[50]։

տուի» (170-րդ օրինակի) վերոհիշյալ հատվածի վավերացված պատճենը։ Այս առթիվ շնորհակալություն ենք հայտնում բնկ. բնկ. Ստեփանյանին և Լատկինին, ինչպես և ՄԼԻ հայկական ֆիլիալի դիրեկտոր Մ. Պ. Աղայանին՝ աջակցության համար։

48 ՍՍԿՊ Կրասնոդարի երկրկոմի պարտիական արխիվ. ֆոնդ 4372, ցուցակ 1, գործ 3, կապոց 1, «Տեղեկատու», էջ 15—16։

49 Նույն տեղում։ Դրանից հետո էլ հիտլերականները փորձել են լեգիոնականներից կամավոր մի ջոկատ ստեղծել, որը ևս բայքայվել է (նույն տեղում և Ղ. Ասատրյանի հուշերը, էջ 39)։

50 «Տեղեկատու», էջ 16։ Նկատենք, որ հիշյալ վկայությամբ ամփոփված են միայն մինչև 1943 թ. հունվարի 1-ի տվյալները։ Դրանից հետո ևս շարունակվել են անցումները մերոնց կողմը

Նանր ճակատագիր վիճակվեց նրանց, ում ֆաշիստները ձերբակալելով Մայկոպի բանտը նետեցին։ Դրանց մեջ էին. Ենոք Խաչատրյանը, Ժորա (Գեորգի) Գրիգորյանը, Արմո Ավետիսյանը, Բագրատ Ոսկանյանը, Սերգեյ Բարսեղյանը, Գրիշա (Գրիգորյան) Հովհաննիսյանը, Սուրեն Մարկոսյանը, Ալբերտ Նալբանդյանը, Իշխան (Հասրաթյան) Մկրտչյանը, Քերոբ Նալչյանը, Խորեն Ջաքարյանը, Արտուշ Սաֆարյանը և ուրիշներ[51]։ Հիտլերականները նրանց ամենաբարբարոս մեթոդներով տանջաքննեցին, ծեծեցին, սովի մատնեցին, օրերով մենախուց նետեցին, նույնիսկ գլխիվայր կախեցին, բայց հնազանդեցնել, ծնկի բերել չկարողացան։ Նրանք ամեն ճիգ ու ջանք թափելով ուզում էին պարզել՝ ո՞վքեր են ընդհատակյա կազմակերպության ղեկավարները, ո՞վ է գերմանական անձնակազմին ոչնչացնելու և սովետական բանակի կողմն անցնելու պլաններ մշակել, ո՞վքեր էին մասնակցում գաղտնի խորհրդակցություններին, ե՞րբ և ո՞րտեղ է գենք հանձնվել լեհերին ու պարտիզաններին, ու՞մ գիտությամբ և ցուցումով են տեղի ունեցել փախուստները զումարտակից և այլն, և այլն։

Մատնությունն ու պրովոկատորները կատարել էին իրենց ստոր գործը[52]։ Հիտլերականներին, ինչպես պարզվում է մի շարք ընդհատակյաների հուշերից, շատ բան էր հայտնի դարձել։ Դա աննկատելի կացության մեջ էր դրել ընդհատակի ղեկավարներին՝ Ենոք Խաչատրյանին, Ժորա Գրիգորյանին, Արմո Ավետիսյանին և մյուսներին։ Ստեղծված իրադրության մեջ նրանց ոչինչ չէր մնում անել, քան ստանձնել ֆաշիստներին արդեն հայտնի «մեղքերը», գիտակցաբար անձնազոհության դիմել և այդպիսով փրկել մյուսների կյանքը։ Նրանք այդ արեցին կոմունիստին, սովետական քաղաքացուն վայել արժանապատվությամբ, այն աներեր հավատով, որ զոհվում են արդար գործի համար, որ իրենց կյանքի գնով մոտեցնում են հաղթանակը։

Ահա թե ինչ է հիշում Սուրեն Մարկոսյանը, որ ձերբակալվածների թվում դաժան խոշտանգումների է ենթարկվել գեստապոյականների կողմից։

— Ենոքին ու Ժորային ֆաշիստները վայրենաբար ծեծեցին, մի քանի ժամով կախեցին գլխիվայր, ապա մենախուց նետեցին։ Հաջորդ օրն ամեն ինչ նորից կրկնվեց։ Նրանք երկուսով ամեն ինչ իրենց վրա վերցրին։ Դատարանում Ենոքը հայտարարեց. «Ես կոմունիստ եմ, սովետական սպա՝ մայոր։ Դաստիարակվել եմ լենինյան ոգով, այդ ոգով էլ կմեռնեմ... Ես ողջ չեմ մնա, բայց կապրի ու կհաղթանակի այն գործը, որի համար պայքարել եմ»։ Նույնը ասաց նաև Ժորան, իսկ վերջում ավելացրեց. «Զնայած այժմ դուք մեզ դատում եք, ֆաշիզմը չի հաղթի։ Սովետական կարգերը կանգուն կմնան»։ Երբ խոսելու հերթը հասավ Արմո Ավետիսյանին, նա գլխից վեր պարզեց կուսանկամության տոմսի անվանաթերթը և ասաց. «Ահա կուսակցականի իմ տոմսը։ Ձեզ չի հաջողվել ինձ բաժանել նրանից։ Այս տոմսով էլ կմեռնեմ»[53]։

և, եթե հաշվի առնենք առաջավոր գիծն անցած բոլոր խմբերը (դրանց ղեկավարներից մեզ հայտնի են Ղ. Ասատրյանը, Ա. Նալբանդյանը, Էդ. Խոնդկարյանը), ապա կարելի է ասել, որ ռազմաճակատի գիծն անցածների վերոհիշյալ թիվը կրկնապատկվել, թերևս նաև եռապատկվել է։

51 Ըստ Ս. Մարկոսյանի պատմածի, Ի. Մկրտչյանի և Ա. Նալբանդյանի հուշերի (էջ 26—27)։

52 Մատնիչների մասին մենք վերջնականապես ճշտված տեղեկություններ չունենք։

53 Ինչպես վերհիշում է ներկա գտնվող Ս. Մարկոսյանը՝ Ա. Ավետիսյանը կուսակցության անդամատոմսի անվանաթերթը կարելի էր հաղուստի մեջ՝ գերվելուց հետո։

Ֆաշիստական զինվորական դաշտային տրիբունալի վճռով կախաղանի միջոցով մահվան են դատապարտվել. 1) Ենոք Խաչատրյանը[54], 2) Ժորա Գրիգորյանը[55], 3) Արմո Ավետիսյանը[56], 4) Գրիշա Հովհաննիսյանը[57], 5) Սերգո Բարսեղյանը[58]։ 5—10 տարվա բանտարկության են դատապարտվել Սուրեն Մարկոսյանը, Ալբերտ Նալբանդյանը, Բագրատ Ոսկանյանը, Իշխան Մկրտչյանը, Քերոբ Նալչյանը։ Մահվան դատապարտվածները կախաղան են հանվել Մայկոպում, հենց հաջորդ օրը՝ նոյեմբերի 7-ին[59], իսկ բանտարկության դատապարտվածները փոխադրվել են նախ Կրասնոդարի բանտը, ապա ֆաշիստական զնդանները[60]։ Կան վկայություններ այն մասին, որ առաջինների հայրենասիրական մակագրություններբ Մայկոպի բանտի պատերին, իսկ մյուսներինը՝ Կրասնոդարի բանտի պատերին պահպանվել են ու այդ քաղաքներն ազատագրելու օրերին լուսանկարվել[61]։

Հայկական լեգիոնի այս առաջին գումարտակի հայրենասիրական կազմակերպության գործունեությունն, անշուշտ, ավելի խորն ու մանրամասն ուսումնասիրության կարիք ունի։ Այդ նպատակով ձեռնարկվելիք աշխատանքը, մեր կարծիքով, պետք է նախ և առաջ ընթանա ինչպես նախկին ընդհատակյինների հայտնաբերման ու նրանց հուշերը ժողովելու, այնպես էլ ժամանակին ստեղծված փաստաթղթերը երևան հանելու և ուսումնասիրելու ուղղությամբ։ Հարկ է հաշվի առնել, որ գումարտակի ընդհատակյա կազմակերպության ու նրա անդամների մասին արժեքավոր նյութեր կարող են հաղորդել ոչ միայն նախկին հայ ընդհատակյինները և նրանց հարազատները, այլ նաև ՍՍՌՄ տերիտորիայի զանազան քաղաքներում (Ժլոբին, Ռոստով, Վոզնեսենսկ, Մայկոպ և այլն) և Լեհաստանում բնակվող շատ քաղաքացիներ։ Անկասկած չափազանց հարուստ նյութ կտան գումարտակի վերաբերյալ գերմանական փաստաթղթերը, դատավարության և հարցաքննությունների արձանագրությունները, որոնց պահպանված լինելն ավելի հավանական է թվում, քան ոչնչացված լինելը։ Ավելացնենք և այն, որ գումարտակի մասին հետախուզական բնույթի, ինչպես նաև մերոնց կողմն անցած լեգիոնականների հա-

---

54 ԵՆՈՔ ՊԵՏՐՈՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ ծնվել է 1907 թ., Ղարաքիլիսա գյուղում (Թուրքիա)։ Մանկությունն անց է կացրել Երևանի որբանոցներում։ Բանակի շարքերն է մտել 1926 թ.։ Ֆիննական պատերազմում ցուցաբերած արիության համար արժանացել է Կարմիր դրոշի շքանշանի (№ 11285)։ Գերվել է 1941 թ. հուլիսին, ամբողջ զորամասից ողջ մնացած երկու մարտիկի հետ։ Նրա երկու տղաներից մեկը՝ Գագիկը աշխատում է Ա. Բակունցի անվան մանկավարժական ուսումնարանում, մյուսը՝ Հրանտը՝ ժամացույցի գործարանում, ստանում է զինվորական թոշակ։

55 ԺՈՐԱ (ԳԵՈՐԳԻ) ԳՐԻԳՈՐՅԱՆԻ մասին ոչ մի տեղեկություն չունենք, ենթադրվում է, թե Բաքվից կամ Լեռնային Ղարաբաղից է։

56 ԱՐՄՈ ԱՎԵՏԻՍՅԱՆԸ հավանաբար Լենինականից է։

57 ԳՐԻՇԱ (ԳՐԻԳՈՐՅԱՆ) ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ մասին տեղեկություններ չունենք։

58 ՍԵՐԳՈ ԳԵՂԱՄԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԸ ծնվել է 1915 թ. Բասարդեչարում, որ և բնակվում են հարազատները։ Ուներ ավագ լեյտենանտի կոչում։

59 Մահապատժին ներկա գտնվողներից Ս. Մարկոսյանի վկայությամբ հայրենասերները մինչև վերջին պահերն էլ մնացել են անդրդվելի, խիզախ, արժանապատվությամբ են ընդունել մահը։ Ժորա Գրիգորյանը կախաղան հանվելուց առաջ նույնիսկ դետնին է տապալել երկու ֆաշիստների։ Նրան սվինահար են արել։ Նշենք նաև այն, որ ըստ «Տեղեկատուի» (էջ 15) դնդակահարվել են ընդհատակյա կազմակերպության 33 ղեկավարներ։ Բայց հիշյալ հինգ հոգուց բացի, մենք մյուսների մասին վկայություններ չունենք։

60 Բանտարկության դատապարտվածներից Բագրատ Ոսկանյանը Սիսիանի շրջանի Բռնակոթ գյուղից էր, հիանալի մանկավարժ։ Նրա և Քերոբ Նալչյանի ճակատագիրը մեզ հայտնի չէ։ Սուրեն Մարկոսյանը շինարար բանվոր է՝ Կիրովաբադում, Ալբերտ Նալբանդյանն աշխատում է Բաքվի գործարաններից մեկում, իսկ Իշխան Մկրտչյանը՝ Ներքեւ-Դագի լեռնա-հետախուզական էքսպեդիցիայում։

61 Պաշտոնաթող գնդապետ Հ. Ղազարյանի և Ս. Մարկոսյանի բանավոր պատմածներից։

գործածների հիման վրա կազմված նյութեր կան սովետական զանազան արխիվներում։ Դրանց որոնման և դրանցից օգտվելու մեր փորձերը մեկ-երկու դեպքում հաջողությամբ են պսակվել։

Ի վերջո հարկ է նշել, որ գումարտակի ընդհատակյաների գործունեության մեջ, ինչ խոսք, տեղ են գտել նաև թերություններ ու բացեր։ Այս առումով, թերևս հետաքրքրությունից զուրկ չեն առանձին նյութերում հանդիպող դատողություններն այն մասին, որ անհրաժեշտ էր ապստամբել ճանապարհին՝ Լարինսկում կամ Վողնեսենսկում, որ ընդհատակի կազմը չափից ավելին էր ընդարձակվել, որ ապստամբական կոմիտեի առանձին անդամներ հարկավոր դեպքում վճռականություն չեն ցուցաբերել։ Բայց սույալ դեպքում այդ հարցի ուսումնասիրությունը մեր նպատակից դուրս է։

Ի՞նչ հետևությունների կարելի է հանգել.

ա) «Մարտական գործողությունների ամբողջ ընթացքով սահմանված է, որ ֆաշիստական ձեռնարկումը հիմնականում տապալվել է։ Գերմանացիներին չի հաջողվել ազգային զորամասերն ու լեգիոններն իբրև զինված ուժ անմիջապես մարտերում օգտագործել»։ «Տեղեկատուի» այս գլխավոր եզրակացությունը ներկա դեպքում ամբողջապես վերաբերում է նաև հայկական լեգիոնի առաջին գումարտակին։

բ) Մահվան սպառնալիքով, խարեությամբ ու նենգությամբ ստեղծված առաջին գումարտակն ընկնելով, կոմունիստներն ու կոմերիտականները, սովետական բանակի զինվորականները՝ մյուս հայրենասերների հետ միասին շարունակել են պայքարը թշնամու խորը թիկունքում, հենց նրա բանակի կազմում։ Նրանք հիմնել են ընդհատակյա կազմակերպություն և պատվով են կատարել իրենց պարտքը, արժանի են եղել իրենց կոչմանը։ Ընդհատակյա պայքարի նրանց խիզախ օրինակին հետևել, նրանով ոգեշնչվել են հայկական լեգիոնի մյուս գումարտակների հայրենասերները[62]։

գ) Ընդհատակն իր լայն գործունեությամբ հասել է այն բանին, որ գումարտակը քայքայվել է։ Հանձին այդ գործունեության հաղթանակել է կոմունիստական գաղափարախոսությունը, սովետական հայրենասիրությունը, մեր կուսակցության ու ժողովրդի գործին հայ ռազմագերիների այս խմբի մեծամասնության անսահման նվիրվածությունը։ Նրանց մղած պայքարը պայմանավորված էր ստեղծված հարկադրական իրադրությամբ և համապատասխանում էր ամեն կերպ թշնամու պարտությունն արագացնելու խնդրին։

դ) Հայկական լեգիոնի, այս դեպքում նրա առաջին գումարտակի, նկատմամբ ցուցաբերված մտավախությունն ու անտարբերությունը հիմնավորված չէ. երկյուղը պետք է հաղթահարել։ Հանգամանքների չարաբաստիկ բերումով, իրենց կամքից անկախ թշնամու ձեռքն ընկած սովետական մարդկանց մի զգալի մասի նկատմամբ դրսևորված հախուռն անվստահությունն անհարիր է մարդու նկատմամբ հոգատար լինելու, երևույթներն օբյեկտիվ գնահատելու լենինյան սկզբունքի հետ։

ե) Ընդհատակյա պայքարի ակտիվ գործիչներն արժանի են մեծարման, իսկ այդ պայքարում զոհված մարտիրոսների հիշատակը՝ հավերժացման։ Դա կնպաստի մեր սերնդի հայրենասիրական դաստիարակությանը։

---

62 Տե՛ս «Հայ ռազմագերիների հակաֆաշիստական ընդհատակյա կազմակերպությունը Լեհաստանում» վերնագրով մեր հոդվածը ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագրի» (հաս. գիտ.) 1962 թ. № 8-ում, էջ 45—66։

М. Н. Акопян

НЕИЗВЕСТНАЯ СТРАНИЦА ПОДПОЛЬНОЙ БОРЬБЫ ВОЕННОПЛЕННЫХ АРМЯН

(Первый—808-й батальон армянского легиона)

Резюме

В числе военнопленных других национальностей Советского Союза военнопленные армяне в гитлеровских концентрационных лагерях подвергались варварским истязаниям, терпели голод и лишения, уничтожались тысячами. Фашисты, кроме всего прочего, преследовали цель принудить военнопленных армян к сотрудничеству. Чтобы использовать их против советского народа, военнопленные армяне были согнаны под страхом смерти в легион, первый (по немецкой нумерации 808-й) батальон которого был сформирован летом 1942 г. в польском городе Пулавы.

С первых же дней среди легионеров образовалась подпольная организация, руководящее ядро которой состояло из советских кадровых офицеров, комиссаров и политруков, коммунистов и комсомольцев. Армянские подпольщики установили связь и наладили сотрудничество с польскими патриотами, борющимися против фашизма, в частности с Еленой Бавионик, Евгенией Лущевской и с семьями Станислава Мазуркевича и Станислава Коттера.

В первом батальоне легиона патриоты создали разветвленную подпольную сеть и начали готовить легионеров к вооруженному выступлению. Однако, 20 августа 1942 г. батальон внезапно был отправлен на фронт. 4-го октября он прибыл в район г. Майкопа. Здесь же подпольная организация немедленно приступила к осуществлению намеченного плана вооруженного восстания: установили связь с местными патриотами, через линию фронта было направлено несколько подпольщиков, чтобы предупредить советское командование о предстоящем выступлении.

Однако фашистам удалось раскрыть подполье, и 9 октября батальон был оттянут в тыл и полностью разоружен. Гитлеровцы арестовали и расстреляли 33 активных подпольщиков, в том числе Енока Хачатряна, Жору (Георгия) Григоряна, Армо Аветисяна, Серго Барсегяна, Гришу Оганесяна. 400 человек из состава батальона было заключено в концентрационные лагеря, а многим легионерам (свыше 200 чел.) удалось перейти на сторону советских войск.

Подпольщики первого батальона армянского легиона провалили планы фашистов использовать их против Родины, в чрезвычайно тяжелых условиях показали блестящий пример патриотизма, с честью выполнили свой долг перед партией и народом.